ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ Ս. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 5-ին, կիրակի, Վաղարշապատի Ս. Գայանե եկեղեցում տեղի ունեցավ քահանայական ձեռնադրություն: Նախորդ օրը, հավարտ երեկոյան ժամերգության, Մայր Տաճարում, նախագահությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, կատարվել էր քահանայական կոչման արարողություն, որի ընթացքում Մայր Աթոռի միաբան Բարեշնորհ Արթուր սրկ. Ղևոնդյանն իր ուխտն էր կնքել և պատրաստակամություն հայտնել ծառայելու Հայ Առաքելական Եկեղեցուն՝ համաձայն Ուղղափառ դավանության և Սուրբ Հայրերի կանոնների:

Կիրակի առավոտյան Ս. Գայանե եկեղեցին լեցուն էր մեծաթիվ բազմությամբ: Հոգևոր աստիճանի շնորհման այս արարողությանը իրենց մասնակցությունն էին բերում վանաբնակ միաբանակից հայրերն ու եղբայրները, ներկա էին ձեռնադրվողի հարազատները, մտերիմ ընկերները և մեծ թվով հավատացյալներ: Իբրև խարտավիլակ իր վկայությունն էր բերում Հոգեշնորհ Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանը, որի ուղեկցությամբ նորընծան ծնրադիր բարձրացավ խորան: Ի պատասխան ձեռնադրող Սրբազանի աղոթքների, դպրաց դասի և ներկա ժողովրդի կողմից լսվեց՝ «արժանի է»: Այնուհետև Ս. Պատարագի ընթացքում շարականների երգեցողության ներքո, Ավագ խորան բարձրացվեց մյուռոնաթափ աղավնին, և Սրբազան Հայրը, կնքելով նորընծա քահանայի ճակատը, անվանակոչեց նրան Ս. Ղևոնդ քահանա: Իր քարոզի մեջ Հուսիկ Սրբազանը՝ սրտագին շնորհավորեց նորաօծ Հայր Ղևոնդին, ապա հավատացյալ ժողովրդին մեկնաբանեց Ձեռնադրության խորհրդի և քահանայական աստիճանի արժեքները:

Նույն օրը, երեկոյան, Մայր Տաճարում տեղի ունեցավ վեղարի տվչություն: Կրկին Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի նախագահությամբ և Մայր Աթոռի միաբանների մասնակցությամբ, Տ. Ղևոնդ աբեղա Ղևոնդյանը ստացավ վեղար՝ այդպիսով ընդունելով կուսակրոն քահանայության կարգ:

Իր քառասնօրյա պահեցողության ավարտից հետո Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի օրհնությամբ և կարգադրությամբ Հայր Ղևոնդը մեկնելու է Աթենք՝ տեղի աստվածաբանական համալսարանում բարձրագույն կրթություն ստանալու, ինչպես նաև պետք է մասնակից դառնա Աթենքի հայոց գաղութի կյանքին իբրև հոգևոր հովիվ:

Տ. ՂԵՎՈՆԴ ԱԲԵՂԱ ՂԵՎՈՆԴՅԱՆԸ ծնվել է 1972 թ. հոկտեմբերի 12-ին, Արտաշատ քաղաքում: Նախնական կրթությունը (1979-1990) ստացել է

ծննդավայրում, Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում: Ավարտելով միջնակարգը՝ ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1996 թ. դեկտեմբերի 26-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի: Դեռևս ուսանողական տարիներից՝ սկսած 1992 թ., ծառայել է Մայր Տաճարում իբրև լուսարարապետի օգնական: 1997 թ. եղել է Մայր Տաճարի ավագ լուսարար և թանգարանի վարիչ: 1998 թ. սեպտեմբերին գրել է ավարտաճառ «Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և հայ գաղթականությունը առաջին Աշխարհամարտի (1915-1918 թթ.) տարիներին» թեմայով: